ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.03.2015թ.

Ո Ր Ո Շ Ում

ԳԲԽ-07/15 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-07/15 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ» ՍՊԸ-ի 2015 թվականի մարտի 13-ի բողոքի քննության ընթացքում ԳԲԽ-07/15 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ» ՍՊԸ-ի 2015 թվականի մարտի 13-ի բողոքի քննության ընթացքում ԳԲԽ-07/15 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել՝ կասեցնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից շուկայում ապրանքի փորձարկման ծառայությունների մատուցման ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԷՆ-ՊԸԾՁԲ-15/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. մարտի 9-ի պայմանագիր կնքելու մասին թիվ 2 որոշման կատարումը 15-րդ չափաբաժնի մասով՝ մինչև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից ԳԲԽ-07/15 բողոքի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամ՝ Աիդա Կարապետյան